11642

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«14» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 239-25

Նախաձեռնող՝ **«Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ**
Լոռու մարզ, Ստեփանավան, Ս. Սարգսյան 1

Գործունեությունը՝ **Ստեփանավան համայնքի կոշտ կենցաղային թափոնների հավաքման գործունեության տեխնիկական վերազինում**
Լոռու մարզ

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 239 - 25

«14» հոկտեմբեր **2025թ.**

Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կոշտ կենցաղային թափոնների հավաքման գործունեության տեխնիկական վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Լոռու մարզ, Ստեփանավան համայնք

Ներածական մաս. «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՀՈԱԿ) իրականացնում է Ստեփանավան համայնքի աղբահանությունը և նախատեսում է իրականացնել ՀՈԱԿ-ի տեխնիկական միջոցների վերազինում:

Վտանգավոր թափոնների հավաքման լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ համաձայն «ՀՀ վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 121-N որոշման և նախաձեռնողի դիմումի համաձայն փորձաքննության է ենթարկվել ՇՄԱԳ հաշվետվությունը՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 7-րդ մասի համապատասխան:

Ստեփանավան քաղաքի ընդհանուր տարածքը 5333.6 հեկտար է, ունի 12,114 հազար բնակչություն՝ (2024թ. տվյալներ), գտնվում է ծովի մակերևույթից 1400 մետր բարձրության վրա: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության

ճանապարհը: Քաղաքում գործում են արտադրական մանր ու միջին սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ զբաղվող կազմակերպություններ:

Նկարագրական մաս. Ստեփանավան քաղաքի աղբահանության՝ աղբի հավաքման և տեղափոխման գործընթացն իրականացվում է «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից: Աղբահանությունը կատարվում է Ստեփանավան քաղաքի բոլոր տարածքներում տեղադրված աղբամաններից և աղբարկղերից՝ օրական հավաքվող և տեղափոխվող աղբի քանակը կազմում է մոտավորապես 8.96 տոննա:

Աղբարկղերը տեղակայված են բանուկ վայրերում, դպրոցների, բազմաբնակարան շենքերի հարևանությամբ: Աղբամաններ կան նաև անհատական բնակելի տների թաղամասերում: Աղբահանությունն իրականացնելու համար համայնքը բաժանված է ինը տարածքների՝ բոլորն էլ սպասարկվում են:

Բնակավայրում աղբը հավաքվում է ըստ կուտակման և տեղափոխվելու է աղբավայր: Աղբի հավաքման որոշակի ժամանակացույց չկա: Աղբի կանոնակարգված տեսակավորում չի կատարվում: Հավաքված աղբը տեղափոխվում է Գյուլագարկ համայնքի տարածք: Հարկ է նշել, որ տվյալ տարածքը չի հադիսանում աղբավայր և չունի աղբավայրերի համար սահանված չափորոշիչներ:

Աղբահանություն իրականացնող ՀՈԱԿ-ն ունի համապատասխան տեխնիկական միջոցներ և մասնագիտացված անձնակազմ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեխնիկական միջոցները հնացած են, իսկ ԳԱԶ 33-098 մակնիշի ինքնաթափ բեռնատար մեքենաները չեն ապահովում աղբի ավտոմատացված բեռնում, Ստեփանավանի համայնքապետարանը նախատեսում է իրականացնել աղբահավաքման տեխնիկական պարկի վերազինում: Նախատեսվում է գնել նոր 660 լիտր տարողությամբ պլաստիկ արկղեր, նոր ժամանակակից աղբատար մեքենաներ՝ չինական արտադրության HOWO 12 cbm մակնիշի կամ համարժեք ցուցանիշների 3 հատ աղբատար մեքենա և վերանորոգել ավլող-լվացող մեքենան: Նշված վերազինումը չի նախատեսում աղբի հավաքման ծավալների կամ հաճախականության փոփոխություն:

Պատճառաբանական մաս. Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ, Օրենքով սահմանված կարգով պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից և շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժիններից ստացվել են կարծիքներ, դիտողություններ և առաջարկություններ: Ստացված կարծիքները ամփոփվել են, որոնց ավելացվել են նաև մասնագետի դիտողությունները ու առաջարկությունները և հաշվետվությունն ուղարկվել է ՀՈԱԿ-ին լրամշակման:

Փորձաքննական գործընթացում նախատեսվող գործունեության վերաբերյալ ստացված կարծիքներով փաստագրվել է, որ առկա են խնդիրներ աղբի տեղադրման

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

տարածքի հետ, որը մտնում է Գյուլագարակ համայնքի վարչական սահմանների մեջ: Գյուլագարակի համայնքապետարանը տրամադրել է իր բացասական կարծիքը, քանի որ Գյուլագարակ համայնքում չկա աղբավայր: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից նույնպես ստացվել է բացասական կարծիք, որում հստակ նշված է, որ աղբը թափվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղի (շրջակա միջավայրի նախարարի 2023 թվականի օգոստոսի 10-ի № 278-Լ հրամանով հաստատված) տարածք և անտառային տարածքում առկա ծառերը և թփերը բացասական ազդեցության են ենթարկվում:

Լրամշակումից հետո ներկայացված հաշվետվության մեջ առկա են բազմաթիվ թերություններ, որոնք չեն շտկվել, իսկ պարզաբանումները ընդունելի չեն ՇՄԱԳԿ ՊՈԱԿ-ի և այլ գերատեսչությունների կողմից: Նախաձեռնող կողմը չի ներկայացրել հավաքվող աղբի բնութագրերը՝ կազմ, վտանգավորության դաս, քանակ, աղբավայրում աղբի տեղադրման օրինական հիմքերը և մի շարք նման պահանջներ, որոնք լրամշակման գրությամբ ներկայացվել են նախաձեռնողին՝ բացառապես օրենքի շրջանակներում:

Օրենքով սահմանված կարգով կազմակերպվել և իրականացվել են հանրային լսումներ Ստեփանավանի համայնքապետարանում: Հանրային երկրորդ լսման ընթացքում ներկայացվել են մի շարք խնդիրները, որոնք չեն ընդունվել նախաձեռնողի կողմից: Նախաձեռնող կողմը հրաժարվել է ստորագրել հանրային երկրորդ լսման արձանագրությունը, որից հետո ՇՄՆ նախարարություն է ներկայացրել բողոք՝ հայտնելով իր անհամաձայնությունը բարձրացված հարցերի վերաբերյալ:

Պետական փորձաքննական եզրակացությունը կազմվել է հիմք ընդունելով հետևյալ փորձաքննական հիմնավորումները.

1. Նախատեսվող գործունության իրականացման արդյունքում վնաս կհասցվի շրջակա միջավայրին՝ մասնավորապես Գյուլագարակ համայնքի և «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքներին և առկա կենսաբազմազանությանը:
2. Հաշվետվությունը պատշաճ ձևով չի լրամշակվել և չի համապատասխանում Օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերը նշված հիմնավորումները՝ Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի և 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ու 3-րդ կետերի համաձայն՝ «Ստեփանավան համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված Լոռու մարզի Ստեփանավան համայնքի կոշտ կենցաղային թափոնների հավաքման

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

գործունեության տեխնիկական վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան